# Բաց մրցույթ տնօրենի թափուր պաշտոնի համար

**«ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամը հայտարարում է բաց մրցույթ տնօրենի թափուր պաշտոնի համար**

**Տնօրենի թեկնածուի նկատմամբ առաջադրվող պահանջները՝**

- Մինչև 65 տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի,
- Բնական կամ տեխնիկական գիտությունների բնագավառում առնվազն թեկնածուի գիտական աստիճան,
- Բնագիտական կամ տեխնիկական գիտությունների բնագավառում՝ արագացուցչային ֆիզիկայի կամ արագացուցչի կիրառմամբ փորձարարական հետազոտությունների բնագավառներում, ավելի քան 15 տարվա աշխատանքային փորձ,
- Բնագիտական կամ տեխնիկական գիտությունների բնագավառում գիտական ստորաբաժանման ղեկավարման առնվազն 5 տարվա փորձ,
- Բնագիտական կամ տեխնիկական գիտությունների բնագավառում ժամանակակից գիտական ենթակառուցվածքի նախագծի հաջող մշակում, ստեղծում և ղեկավարում,
- Արտասահմանյան գիտահետազոտական հաստատություններում գործնական կապերի առկայություն և համատեղ գիտական աշխատանքների կատարման փորձ:

**Դիմողի կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝**

- Դիմում (լրացվում է տեղում)
- Երկու լուսանկար (3×4 չափի)
- Անձնագրի և հանրային ծառայության համարանիշի (սոց. քարտ) պատճեններ
- Ինքնակենսագրություն (ռեզյումե)
- Գիտական աշխատանքների ցանկ
- Բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն, գիտական աստիճանը, գիտական կոչումը հավաստող վկայականների պատճեններ
- Հիմնադրամի՝ առաջիկա 5 տարիների համար պլանավորվող գիտական գործունեության և զարգացման նախագիծ

**Մրցույթին դիմելու ընթացակարգը՝**

Հիմնադրամի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը (համարակալված և յուրաքանչյուր էջի ետնամասում ստորագրված) առձեռն ներկայացվում է «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների» ինստիտուտ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 11:00-17:00 (հասցե՝ ք. Երևան, Հր. Աճառյան 31, 218 սենյակ):

**<u>Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է՝ 19.05.2026թ.</u>**

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք այցելել «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների» ինստիտուտ կամ զանգահարել +374–(10)-629806 հեռախոսահամարով: